



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 17279 գործարքներ, որոնց քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ աճել է 19.6%-ով, իսկ 2009թ. նոյեմբերի համեմատ՝ 10.2%-ով:

2009թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4574 օտարման գործարքների 84.2%-ը կազմել են առուվաճառքները, 14.8%-ը՝ նվիրատվությունները և 1.0-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 30.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 25.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. դեկտեմբերին, 2009թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.5%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.5%-ով:

2009թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. դեկտեմբերին, 2009թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 14.0%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 34.8%-ով:

2009թ. դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2008թ.	դեկտեմբեր 2009թ.	նոյեմբեր 2009թ.
Կենտրոն	496300	472300	465600
Արաբկիր	392800	370800	366800
Քանաքեռ-Զեյթուն	296500	280900	277500
Նոր-Նորք	265700	230500	227600
Ավան	264600	231800	229400
Էրեբունի	267200	245400	241100
Շենգավիթ	270300	245600	241800
Դավթաշեն	297200	265700	261300
Աջափնյակ	255000	234800	230700
Մալաթիա-Սեբաստիա	253600	233800	230100
Նուբարաշեն	152600	142200	142200
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	292000	268500	264900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. դեկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. նոյեմբերի համեմատ, աճել են 1.4%-ով:

2009թ. դեկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 424 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. նոյեմբերի համեմատ աճել է 23.6%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 6.8%-ով:

2009թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2008թ.	դեկտեմբեր 2009թ.	նոյեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	145100	139100	135300
	Ապարան	37000	44800	44800
	Թալին	48200	51300	50500
Արարատ	Արտաշատ	105700	92600	90500
	Մասիս	146600	121600	118500
	Վեդի	84800	91700	90900

	Արարատ	75500	88300	86500
Արմավիր	Վաղարշապատ	175600	157400	156700
	Արմավիր	126500	118700	118600
	Մեծամոր	93000	79800	81400
	Սևան	104500	91700	89700
Գեղարքունիք	Գավառ	51100	43700	43000
	Մարտունի	73300	82600	82600
	Վարդենիս	33500	31500	31200
	Ճամբարակ	17300	18900	18700
	Վանաձոր	105400	92900	92400
Լոռի	Ստեփանավան	50200	57100	56300
	Սպիտակ	65400	77500	76100
	Ալավերդի	33200	31600	31600
	Տաշիր	33500	34900	34900
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	14100	14100
	Արմավիր	174000	155400	150400
Կոտայք	Նոր Հաճն	145100	129100	128300
	Բյուրեղավան	121600	103400	100800
	Եղվարդ	127600	120700	120700
	Հրազդան	75400	61000	59300
	Ծաղկաձոր	172500	181500	181500
	Չարենցավան	103000	77700	75200
	Գյումրի	122500	116400	114800
Շիրակ	Արթիկ	62500	56800	55900
	Մարալիկ	29800	30200	30200
	Գորիս	114600	140300	139400
Սյունիք	Կապան	110400	100200	102000
	Սիսիան	88500	80800	80700
	Մեղրի	50500	57000	56900
	Ագարակ	30300	32800	32800
	Քաջարան	53600	59700	58800
	Դաստակերտ	7000	8000	8000
	Վայք	83800	70000	70000
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	106400	110100	110100
	Զերմուկ	145300	108500	108500
	Դիլիջան	106000	92800	92800
Տավուշ	Իջևան	152100	135100	132500
	Բերդ	40600	42000	42000
	Նոյեմբերյան	31200	33400	33200
	Այրում	21100	24000	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2009թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. նոյեմբերի համեմատ աճել են 1.0%-ով:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 472 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 135, մարզերում միասին վերցրած՝ 337: 2009թ. դեկտեմբերին, 2009թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 5.4%-ով, ընդ որում Երևանում նվազել է 11.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 13.9%-ով: 2008թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի

գործարքների քանակն աճել է 1.1%-ով, ընդ որում Երևանում՝ 28.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 6.9%-ով:

2009թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2008թ.	դեկտեմբեր 2009թ.	նոյեմբեր 2009թ.
Կենտրոն	510000	476600	471300
Արաբկիր	438700	374500	371500
Քանաքեռ Զեյթուն	325900	284500	280200
Նորք Մարաշ	314100	282000	279500
Ավան	291200	234800	234300
Էրեբունի	291400	247800	244200
Շենգավիթ	293900	247800	243800
Դավթաշեն	324500	270400	264600
Աջափնյակ	302400	237700	234400
Մալաթիա-Սեբաստիա	295700	236300	233000
Նուբարաշեն	172300	146400	147100
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>323600</i>	<i>276300</i>	<i>273100</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը,/ 2009թ. նոյեմբերի համեմատ, աճել են 1.2%-ով:

2009թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2008թ.	դեկտեմբեր 2009թ.	նոյեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	145400	141700	141200
	Ապարան	38900	46900	46600
	Թալին	48900	52400	51600
Արարատ	Արտաշատ	112300	94800	91800
	Մասիս	146800	123900	122800
	Վեդի	91900	93400	92300
	Արարատ	75700	89500	87300
Արմավիր	Վաղարշապատ	180800	165900	164900
	Արմավիր	132500	121200	118800
Գեղարքունիք	Սևան	107500	93400	92700
	Գավառ	55800	46200	45800
	Մարտունի	78000	85300	84100
	Վարդենիս	37400	34100	34000

	Ճամբարակ	21500	21000	20800
Լոռի	Վանաձոր	110200	96400	96000
	Ստեփանավան	54000	60600	59900
	Սպիտակ	67800	78900	78600
	Ալավերդի	37300	34800	34600
	Տաշիր	38100	37600	37100
	Թումանյան	10400	10300	10100
	Շամլուղ	7400	7400	7400
	Ախթալա	16200	18200	18200
Կոտայք	Աբովյան	192300	157600	153800
	Նոր Հաճն	147300	136100	136000
	Բյուրեղավան	123400	105400	102700
	Եղվարդ	133700	127900	127700
	Հրազդան	81400	63200	62600
	Ծաղկաձոր	274600	299500	296100
	Չարենցավան	103800	80100	80000
Շիրակ	Գյումրի	125500	118900	116100
	Արթիկ	64000	60700	60500
	Մարալիկ	32700	31500	31500
Սյունիք	Գորիս	126800	143100	140400
	Կապան	112400	104300	104900
	Միսիան	90800	84300	84100
	Մեղրի	52000	59100	59000
	Ագարակ	33300	34700	34600
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	87500	73500	73100
	Եղեգնաձոր	111300	114300	113600
	Ջերմուկ	101700	112600	111600
Տավուշ	Դիլիջան	119400	96900	95700
	Իջևան	153200	136700	132800
	Բերդ	42600	43600	43500
	Նոյեմբերյան	36700	35100	34800
	Այրում	23000	25800	25800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2009թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. նոյեմբերի համեմատ, աճել են 1.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1826 միավոր /3948.28 հա/ հողեր, որից Երևանում՝ 89 միավոր /26.79 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1103 միավոր /3843.55 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /20.05 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 512 միավոր /53.97 հա/, որից Երևանում՝ 61 միավոր /3.12 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 182 միավոր /15.04 հա/, որից Երևանում՝ 25 միավոր /3.57 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 15 միավոր /5.04 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.05 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 13 միավոր /30.59 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.10 հա/:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1678 միավորի /3871.87 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 83 միավոր /26.52 հա/, նվիրատվության գործարքներ՝ 128 միավորի /69.14 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.21 հա/ և փոխանակության գործարքներ՝ 20 միավորի /7.27 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2009թ. դեկտեմբերին, 2008թ. դեկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 48.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 26.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 34.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 3015.98 հա, որից 3012.18 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.7%-ը կամ 515 գործարքներ /3185.42 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 25 գործարքներ /21.37 հա/, իսկ 68.8%-ը կամ 1155 միավորը /685.34 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 56 միավոր /5.13 հա/:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 8 գործարք /1.11 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	1	20.00	1	0.05	13	0.29	10	1.03	1	0.05	0	0.00	44	2.58	11	2.50
Արագածոտն	43	94.57	2	0.22	2	0.30	16	1.00	73	75.21	0	0.00	33	3.87	0	0.00
Արարատ	3	12.50	3	0.25	2	0.09	14	0.15	99	37.05	1	1.00	54	5.58	2	0.09
Արմավիր	4	5.43	2	0.91	11	0.76	8	0.29	162	234.90	0	0.00	59	6.03	5	0.14
Գեղարքունիք	2	3.00	0	0.00	38	3.14	5	0.83	54	46.01	0	0.00	25	2.99	3	2.12
Լոռի	161	2944.08	0	0.00	4	0.47	17	1.62	182	68.10	0	0.00	14	1.71	1	0.01
Կոտայք	27	43.64	0	0.00	24	1.54	32	0.84	78	54.07	1	0.23	79	7.08	8	1.70
Շիրակ	0	0.00	0	0.00	13	7.74	4	0.34	26	33.46	2	0.16	15	1.67	2	0.18
Սյունիք	2	3.40	0	0.00	0	0.00	4	0.02	37	44.10	0	0.00	4	0.30	1	0.002
Վայոց Ձոր	11	26.79	0	0.00	2	0.45	11	0.80	22	15.62	2	2.13	3	0.34	4	0.19
Տավուշ	1	0.95	0	0.00	12	0.93	8	0.60	29	10.32	1	0.09	7	0.48	0	0.00
Ընդամենը	255	3154.36	8	1.43	121	15.71	129	7.52	763	618.89	7	3.61	337	32.63	37	6.93

Ստորև ներկայացվում է 2009թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի

նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտներ ի հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի			
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	23	1.35	1	0.05	12	0.27	10	1.03	2	20.02	1	20.00	0	0.00	1	0.02	0	0.00		
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	63	96.09	43	94.57	2	0.22	2	0.30	16	1.00		
Արարատ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	21	12.98	3	12.50	3	0.25	2	0.09	13	0.14		
Արմավիր	3	0.03	0	0.00	0	0.00	3	0.03	22	7.36	4	5.43	2	0.91	11	0.76	5	0.26		
Գեղարքունիք	3	0.58	0	0.00	0	0.00	3	0.58	42	6.39	2	3.00	0	0.00	38	3.14	2	0.25		
Լոռի	2	0.09	0	0.00	0	0.00	2	0.09	180	2946.07	161	2944.08	0	0.00	4	0.47	15	1.52		
Կոտայք	8	0.25	0	0.00	1	0.05	7	0.20	73	45.53	25	43.39	0	0.00	23	1.49	25	0.65		
Շիրակ	2	0.08	0	0.00	2	0.08	0	0.00	15	8.00	0	0.00	0	0.00	11	7.66	4	0.34		
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	3.42	2	3.40	0	0.00	0	0.00	4	0.02		
Վայոց Ձոր	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	23	28.00	11	26.79	0	0.00	2	0.45	10	0.76		
Տավուշ	4	0.07	0	0.00	1	0.03	3	0.04	17	2.41	1	0.95	0	0.00	11	0.90	5	0.56		
Ընդամենը	47	2.50	1	0.05	16	0.43	30	2.02	464	3176.27	253	3154.11	7	1.38	105	15.28	99	5.50		

Հանրապետությունում 2009թ. դեկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք /0.25 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. դեկտեմբերին, 2008թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 41.6%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 71.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 44.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.8 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 8.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 25.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 22.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	25	57.17	37.2	830.3	353.5	55	36.21	365.0	12000.0	4366.9
Ապարան						5	12.12	86.5	2727.3	548.8
Թալին	18	37.40	33.6	113.2	71.0	11	20.19	93.6	5494.5	490.3
Օճախովիտ						2	6.69	79.5	1000.0	245.0

Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.50	2117.5	2117.5	2117.5	42	12.32	335.1	10833.3	2135.5
Մասիս	2	12.00	60.5	70.0	65.3	11	8.70	200.0	11904.8	2995.2
Վեդի						45	15.72	207.0	10795.1	1837.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	0.40	174.8	174.8	174.8	86	165.76	294.3	9090.0	1175.6
Բաղրամյան	2	4.53	622.1	622.1	622.1	32	47.24	90.6	2561.1	672.3
Վաղարշապատ	1	0.50	113.6	113.6	113.6	43	21.56	444.4	11764.7	2968.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						17	6.87	199.8	1875.0	432.6
Ճամբարակ	2	3.00	433.3	581.0	507.2	23	17.89	60.5	953.3	253.3
Մարտունի						6	1.68	51.1	2850.0	572.5
Սևան						1	1.80	52.2	2134.8	245.3
Վարդենիս						7	17.77	41.2	2575.1	417.5
Լոռու մարզ										
Ալավերդի						57	9.58	170.4	6424.2	905.1
Գուգարք	46	899.44	35.5	51.7	44.4			234.6	6065.9	1100.0
Սպիտակ	104	2026.5	27.3	1120.0	37.6	3	0.80	250.0	5555.5	628.2
Ստեփանավան	11	18.14	440.0	1197.0	798.2	4	2.99	90.6	1686.6	385.5
Տաշիր						14	6.93	45.3	1384.4	188.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	14.42	77.5	5203.7	1256.5	30	8.83	279.3	11942.7	4713.0
Եղվարդ	14	23.96	74.3	1807.9	969.4	29	31.57	174.4	11971.8	3395.5
Հրազդան	1	5.00	662.0	662.0	662.0	19	13.68	130.5	10256.4	1620.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						14	9.73	252.0	1693.1	500.0
Ամասիա						2	12.84	40.9	261.0	132.5
Անի						6	7.82	110.6	546.9	282.1
Աշոցք								58.5	215.8	118.6
Արթիկ						4	3.07	79.4	1428.6	252.5
Սյունիքի մարզ										
Գորիս						17	9.70	92.6	1023.2	502.5
Կապան	1	0.40	186.8	186.8	186.8	1	0.25	120.0	841.6	290.6
Մեղրի						5	1.17	193.0	3000.0	600.0
Սիսիան	1	3.00	263.0	263.0	263.0	14	32.98	46.3	1977.4	295.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	22.29	45.0	420.0	125.6	15	13.71	125.0	10000.0	1540.1
Վայք	3	4.50	34.2	68.8	45.8	7	1.91	58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ						11	2.02	213.3	3783.8	525.3
Իջևան	1	0.95	115.8	115.8	115.8	12	3.08	267.5	9454.5	1048.5
Նոյեմբերյան						6	5.21	46.7	7368.4	774.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	3016.0	175.0	179.1	177.1	28	28963.0	130.7	22200.0	2572.0
Ապարան						4	7626.0	124.1	609.6	260.4
Թալին						1	2108.0	63.2	1454.8	140.0
Ծաղկահովիտ								60.0	214.3	77.8
Արարատի մարզ										
Արտաշատ						20	27096.0	173.9	7140.3	893.0
Մասիս	2	896.0	2990.0	3003.1	2996.6	24	17150.0	187.5	25000.0	1216.5
Վեդի						10	11512.0	126.1	5000.0	661.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	11	7573.0	290.4	1300.0	1208.2	27	32904.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան								100.0	833.3	180.0
Վաղարշապատ						32	27369.0	197.4	26528.4	1532.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	3896.0	186.6	1084.3	448.5
Ճամբարակ	33	26321.0	121.3	130.5	126.1	1	800.0	71.3	2286.2	135.2
Մարտունի	1	420.0	118.8	118.8	118.8	16	16550.0	119.3	5000.0	273.3
Սևան	4	4685.0	113.3	342.0	170.6	2	6890.0	240.0	3110.4	225.3
Վարդենիս						1	1723.0	72.5	987.2	149.0
Լոռու մարզ										
Ալավերդի						4	8720.0	114.3	1388.9	200.0
Գուգարք						4	2802.0	77.9	14083.3	748.3
Սյուխակ	4	4700.0	500.0	509.1	502.3	3	2340.0	104.9	1348.3	196.8
Ստեփանավան						2	1430.0	88.2	1666.7	143.0
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	3584.2	1543.5	2264.2	1760.8	37	34552.0	264.5	35353.5	2037.5
Եղվարդ	14	11354.0	1617.0	3140.0	2800.3	32	28373.0	173.6	27000.0	2845.5
Հրազդան						8	6080.0	117.7	34848.5	1341.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	72914.0	376.3	2919.7	1108.1	8	7820.0	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	278.0	465.0	340.6	4	6670.0	67.9	180.6	123.2
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	3	2500.0	66.9	276.8	206.8	3	2220.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1469.0	112.2	1700.0	292.3
Կապան								67.9	2638.9	235.2
Մեղրի								68.5	632.9	145.8
Միսիան						3	1560.0	123.5	875.0	160.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	4533.0	134.2	135.1	134.7	3	3400.0	96.7	7659.6	410.5
Վայք								120.7	1448.3	157.2
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	11	8989.0	1650.0	1800.0	1745.5	7	4810.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	163.0

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 8 գործարք 0.99 հա մակերեսով՝ Լոռու մարզում:

2009թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1327 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցումների քանակի 7.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 92.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. դեկտեմբերին 2009թ. նոյեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 26.0%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ աճել՝ 25.2%-ով:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 44 բնակարանների, 39 անհատական բնակելի տների, 469 հասարակական, 159 արտադրական նշանակության օբյեկտների, 521 միավոր /3151.24 հա/ հողերի և 95 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 10 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.002 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. նոյեմբերի համեմատ աճել է 3.3 անգամ, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 11.1%-ով: 2009թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 3151.24 հա հողերից 25.31 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3125.94 հա հողերի 0.02 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 25.57 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 2042.18 հա, որից 2033.46 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1595.43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	22	63.36
Արարատ	7	1344.32	28	689.14
Արմավիր	0	0.00	8	97.99
Գեղարքունիք	0	0.00	18	74.86
Լոռի	1	3.00	13	146.72
Կոտայք	0	0.00	14	5.39
Շիրակ	4	243.00	116	151.51
Սյունիք	1	5.11	22	198.59
Վայոց Ձոր	0	0.00	39	19.30
Տավուշ	0	0.00	10	37.87
Ընդամենը	13	1595.43	290	1484.73

2009թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2559 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. նոյեմբերի համեմատ աճել է 24.8%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 44.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.6%/, առանձնատների /24.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.2%/ և հողերի /14.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1049 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. նոյեմբերի համեմատ աճել է 23.1%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 40.1%-ով:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 404.47 հա հողեր, որից 13.70 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 94.2%-ը կամ 380.97 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.51 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 216.08 հա, որից 214.85 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 194 գործարքներ, որից 144-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 79.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16.5%-ն՝ անհատական բնակելի տների, 2.1%՝ հասարակական, 0.5%՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.0%-ը՝ հողերի և 0.5%-ը՝ ավտոտնակների նկատմամբ: 2009թ. նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 24.4%-ով, ընդ որում Երևանում՝ 11.6%-ով, իսկ մարզերում՝ 85.2%-ով: 2008թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.5 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.4 անգամ, մարզերում՝ 2.9 անգամ:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 1 և 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.02%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2009թ. նոյեմբերի համեմատ, աճել է 50.0%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ նվազել 50.0%-ով: 2009թ. դեկտեմբերին մասնավորեցման գործարքներից 1-ական գործարք արձանագրվել են Արարատի, Շիրակի և Սյունիքի մարզերում:

2009թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2521 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. նոյեմբերի համեմատ աճել է 8.8%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 3.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն